

Հեղինակութը վրայ եղած մնացորդ համարման պատճառաւ կամ ուրիշ բանի մը համար, կրկին հարթաչափութիներն զեռ չէին կրնար համողել, և 1847ին ծախիւք զարգացուցիչ ընկերութեան մը (որոնց մէջ էր նաև վենետիկոյ վաճառականութեան Սենեակն ալ) եղիպտական խառն մասնաժողով մը կազմուեցաւ, և զայն կազմողներն էին՝ փոխարքային կողմանէ վերոյիշեալն Լինան տը Պէլֆոն, և եւրոպացւոց կողմանէ Դալապո և Պուրտոլու գաղղիացի ճարտարապետներն, Սղէֆրնսըն անդիիացին, և Նեկրելի խտալացի ճարտարապետը՝ որ Աւարիացւոց ծառայութե մէջ էր, առաջնորդ երկաթուղեաց վենետիկոյ գաւառին։ Այս մասնաժողովը ոչ միայն հարթաչափութեան խրնդիրը պիտոր լուծէր, այլ և որ կարեռ բագոյնն է, ջրանցքին ճամբուն խնդիրը։ Գալով հարթաչափութեան՝ մասնաժողովն ուրիշ բան չըրաւ բայց եթէ հաստատել առաջի չորս անգամ ետևէ ետև եղած հարթաչափութեան անսխալ ըլլալը, և աս անդամ ալ որոշ վճիռ եղաւ։ իսկ ջրանցքին ճամբուն խնդրոյն մէջ կարծիքնին չմիաբանեցան։ Սղէֆրնարն կերպով մը իրեն կարծիքը չյայտնեց, Դալապո խոտոր գիծ մը առաջարկեց, որուն մէկ ծայրն Ալեքսանդրիայէն կը սկսէր, իսկ Նեկրելլի և Պուրտոլու հաւանութիւն ցուցուցին ուղիղ գծին զոր առաջարկեր և քններ էր Լինան պէյը (սոյն մականուամբ աւելի ծանօթ է Լինան տը Պէլֆոն), որ իր վերջի քննութեանց ատեն ընկեր առաւ իրեն եղիպտական տէրութեան ծառայող ուրիշ ճարտարապետ մը, որ է Մուճէլ-պէյը։

Կը շարունակո՞ւ։

Չինաց քաղաքականութիւնը
և կրօնքը։

Չինաստան երկար ժամանակ անծանօթ մնաց Եւրոպացւոց, բայց Հռովմայեցիք կասկածեցան անոր կացութեանը վրայ և իրենց աշխարհագիրները Սէրիք անունը սկսան տալ անոր, որ է ըսել մետաքսի երկիր։ վասն զի արևմուտք եկող կարաւանները սկսան անկէ մետաքսէ ազնիւ ու բարակ հիւսուածքներ բերել, իսկ Յուստինիանոս կայսեր ժամանակ ոչ միայն մետաքսի դործածութիւնը յաճախսեր էր յԵւրոպա, այլ և մետաքսագործ թևաւոր որդանց տնտեսութիւնը։ Բուն Չինաստանի տարածութը, առանց Մանչուրիան, Մողոլաց երկիրը, Դիպէզը, Դոնքինն և Քոչինչինն մէկտեղ առնելու 170 հազար փարսախ քառակուսի է, հիւսիսակողմը անապատ, արևմտակողմը բարձրաբերձ լերանց գոտիներ, արևելքէն և հարաւէն Ովկիանոս։

Թէպէտե չկայ տեղ ուր մարդս բնակած ըլլայ և յիշատակներ թողուցած ըլլայ, յիշատակ իր մտաւոր կարծութեանցը, յիշատակ իր կրօնական, հոգեկան և սրտի զգացմանցը, յիշատակ իր դիցաղնական առաքինութեանցը և կրից անգամ, սակայն մարդկանց զանազանութենէն կը հետեւի որ իրենց յիշատակաց մէջն ալ ըլլան զանազանութիւններ։ Չինք ալ թողուցած են յիշատակներ, անբաւ յիշատակներ և տեսակ տեսակ յիշատակներ։ — Ինչպէս անձի մը՝ նոյնպէս ալ բովանդակ աղջի մը պատմութիւնը զիտնալն աղջին էութիւնը ճանչնալ, անոր ոգւոյն մէջ թափանցել է. բայց ալ աւելի մէկը կրնայ ըմբոնել ազգի մը էութիւնը երբ անոր կրօնական և քաղաքական կարդաւորութեանցը վրայ խորհրդածէ, ոչ միանգամ, այլ շատ և ստէպ։

Հայրական և կամ նահապետական իշխանութիւնը Չինաց վարչութեան հիմը և սկիզբն եղած է. ոչ երկար ժա-

մանակուանքարդաւաճ քաղաքականութիւնը կրցած է իրենց այս կերպ վարչութեան վրայ փոխութեան մը բերել և ոչ այլ ինչ . մէկ խօսքով կայսրը Զինաց մէջ իր հպատակացը հայր եղած է , և է մինչև հիմա . և եթէ իրեկ հայր ունի բացարձակ հեղինակութիւն իր հպատակացը վրայ , նոյն հեղինակութիւնը աւանդած է ամենայն հարց : Այս նահապետական վարչութեան սկզբունքը ուշի ուշով իրենց սրբազն օրինաց գրոց մէջ մեկնեալ և բացարեալ է , և ամէն տարի նոյնը 'ի լուր ժողովրդեան կը կարդան ատենակալք , որպէս զի զրոշմուխն անոր մոտաց մէջ այն ամէն կանոնները որոնցմով իրենց առ հայրենիս ունեցած պարտքերը պիտի կատարեն . « Մեր գնացիցը մէջ , կ'ըսէ օրինաց զիրքը , անկանոնութիւնը որդիական պարտուց պակասութիւն է . բարեկամաց հետ եղած առնչութեց մէջ կեղծաւորութիւն խառնել՝ որդիական պարտուց պակասութիւն . զի նուց տակ ու պատերազմի մէջ վեհերուաըլան որդիական պարտուց պակասութիւն է » . . . և այլն : Անդրանիկ որդւոյն իրաւունքները հետեւեալ կերպով հաստատուած են . « Առ ծնողս և առ անդրանիկս եղած պարտքերը հաւասարապէս պարտաւորիչ են . վասն զի այն որ բարի զաւակ է , չկրնար հնազանդ եղբայր աւ չըլլալ . և երրոր մէկը երկուքն ալ է՝ այնպիսին իր բնակարանին մէջ հանդարտ հպատակ մ'է . ծառայութեան գործօն , տնէն դուրս հաւատարիմ և արիտմիրտ զօրական . թող ձեզ մէ իւրաքանչիւրը կատարէ իր որդիութեան և կրտսեր եղբայրութեան պարտքերը , ինչպէս անցած դարերու սրբակրօն արիտմիրտ զօրական . թող ձեզ մէ իւրաքանչիւրը կատարէ իր որդիութեան և կրտսեր եղբայրութեան պարտքերը , ինչպէս անցած դարերու սրբակրօն արիտմիրտ զօրական . զին Եաօ և Գուշն կայսերաց իմաստութիւնը ընկերութեան այս ամենակարեսոր կապերուն վրայ հաստատուած էին : — Ման կիոս ըստած է . եթէ ամենայն մարդիկ պատուէին իրենց ծնողքը և իրենց անդրանիկը՝ աշխարհքս միշտ խաղաղ կ'ըլլար » :

Գալովնախտէրութե զվարյն , կըրկ-

նակի է իրեն գլխաւորութիւնը, մէջմը
իրրե կայսր, մէջմ' ալ իրրե քահանայա-
պետ: իրեն քահանաները միանդամայն
են իրեն առանձին խորհրդականները,
փոխարքաները, մանտարինները, և իր
բազմաթիւ քաղաքական և զինուորա-
կան պաշտօնեաները:

Բացարձակ է կայսեր իշխանութիւ-
նը, ունի իր հպատակաց վրայ իրաւունքը
կենաց և մահու. բայց սակայն եթէ
յանցաւորի մը պատիժը սաստկացնե-
լու և կամ մեղմացնելու հրաման ալ
տայ, այն դատաւորին կանոն չըլլար, և
ոչ ալ թագաւորը օրէնքները կը պահէ:
Կայսը որդի երկնից կ'ըսուի, և միշտ
աստուածական պատիւ կ'առնու. իր
արտաքին դրան առջևէն ալ կառօք և
կամ ձիով անցնիլ չըլլար. և ատենա-
կալք ամէն նահանգաց մէջ կայսերա-
կան թուղթերը խունկի մէջ կ'այրեն՝
երեսնին դէպ 'ի թէքին գետնամած:
Սակայն ոչ մէկ, այլ բազմաթիւ կայ-
սերը գահընկեց եղած են, իրենց բաց-
արձակ և բոնաւոր վարչութեան հա-
մար:

Առաջին պաշտօնեայք կը կաղմեն
Նայի-Քո ըսոււածը, որ է գերագոյն և
կամ նեղին ատեանը, և են թուով
չորս . երկուքը թաթար . և երկուքը Զին .
բայց առջի երկուքը միշտ նախաթոռք
են : Իրենց իշխանութեանը բազմաթիւ
օդնականներ ունին և ասոնցմով ատեա-
նը կ'ամբողջանայ : Գերագոյն ատեա-
նէն զատ կայ ուրիշ մ'ալ Քիուն-Քի-
Դա-Զին անուամբ . այս ատեանն ալ
մասնաւոր դէպքերու մէջ խորհրդա-
տու է կայսեր : Լու-Բու ատեանը վեց
բաժնուած է Առաջնոյն կ'յնայ որոշել,
կարգել զպաշտօնակալները և անոնց
գնացքը քննել երկրորդին տէրութեան
ելումուտքը հոգալ . երրորդը արարողու-
թեանց ու ծիսից համար է . չորրորդը
զինուորական ատեան . Հինգերորդը գե-
րագոյն ատեան արգարութեան . վեցե-
րորդը հասարակաց աշխատութեան .
ասոնցմէ զատ կան ուրիշ ատեաններ
ալ որոնք առջի վեցին մէջ կը բովան-
դակուին . ինչպէս աստղաբաշխութեան

ատեանը երրորդ ատեանին մասն է, վասն զի արարողութեանց կարգաւորութիւնը ըստ առամարին կ'ըլլայ: կայ ուրիշ ատեան մ'ալ, որ յիսունին աւելի անդամ ունի, և երկու նախագահ, մէկը թաթար և միւսը Զին, և կ'ըսուի ատեան համարակալաց. ասոնց պարտքըն է իբրև քննիչ այցելութիւն ընել գաւառաց, և ազատութիւն ունին ոչ միայն ազգարարութիւննելու՝ այլ և յանդիմաննելու զիթագաւորը. իրաւ է որ մահուրնէ ազատ կը մնան ըստ օրինի գործելնուն համար, բայց կրնայ կայսրը զիրենք պատժել և ինչուան բարձրնեց ընել երբ անհաճոյ գայ իբրեն եղած յանդիմանութիւնը և կամ աղողը: կը պատմուի որ Քին-Քոնի թագաւորին թանկագին ձին ախոռապանին անհոգութեամբը կը մեռնի. երբ բանը թագաւորին ականջը կը հասնի, նիզակն առած կը վազէ զձիադարմանն սպաննելու. Եան-Աէ, կայսեր առաջին պաշտօնեան, ականատես ըլլալով այս տեսարանիս, կը կեցնէ ըղկայսրը և կ'ըսէ. «Ի՞նչ կ'ընես, կ'ուզես սպաննել, առանց ըրած յանցանաց ծանրութիւն իրեն ճանչցըննելու: — Հապտ, կ'ըսէ կայսրը, ճանչցու, և յետոյ թող պատրաստուի մահուան»: Եան-Աէ նիզակը ձեռքը բռնած, կը սկսի ախոռապանին խօսիլ. «Թշուառական, ահա յանցանկներդ, աղէկ ուշ զիրնախ պատճառ ես այս ձիուն մահուան, վասն զի քեզի յանձնուած էր անորդարմանը. այս յանցանքդ միայն զքեզմահուան արժանի կ'ընէ. երկրորդ անդամ պատճառ եղար որ իմ տէրս իր ձին կորանցնելուն համար այնչափ կիրք ելաւ, որ ինչուան իր ձեռքովը ուզեց զքեկ սպաննել. ահա ուրիշ յանցանք մ'ալ որուն պատճառն ալ դու ես. վերջապէս ամէն կայսերը և ամենայն տէրութիւնք պիտի իմանան որ իր ձիուն մահուան վրէժիսնդրութիւնը մարդասպանութեամբ կատարեր է, և այս պատճառաւ իր համբաւը պիտի կորսնցընէ անոնց առջե. այս ալ զարձեալ քույանց անքդ է, թշուառական, որ իր հետեւանք.

ներն ալ ունի »: Ծիծաղելով մը աղաղակեց կայսրը. « Ազատ թողուցէք, կը ներեմ իրեն »:

Մանտարինք երկու կը բաժնուին . գրագէտ մանտարինք, և մանտարինք պատերազմի. առաջինները տէրութեան քաղաքական վարչութեան վերաբերեալ անձինք են, թուով 14 հազար, և ինը դաս բաժնուած. առաջին երեք դասին անձինքը առաջին կարգի պաշտօններու սահմանեալ են, իսկ ետքի վեցը ստորնազոյն պաշտամանց :

Պատերազմի մանտարինները հինգ դաս բաժնուած են. իւրաքանչիւրը զատ զատ ատեանէ կախումն ունի, բայց կայ ուրիշ վեցերորդ ատեան մ'ալ որ Բէքին կը նստի, և հինգին վրայ ալ իշխանութիւն ունի:

Բայց քաղաքական մանտարին մը այնչափ աւելի պատուեալ է զինուորական մանտարինէն, որ երբ դուրս ելլայ չորս հոգի ուսերնուն վրայ կը վերցնեն զայն և ժողովուրդը զիմացը երկրպագութիւն կ'ընէ. իսկ ետքինները շատ անդամ քալելով, և հազիւ երբէք ձիով: Ով որ ուզէ քաղաքական մանտարիններուն կարգը անցնիլ, հինգ տարուըննէ ետքը ինքզինքը ուսման պէտք է որ նըւիրէ:

Բանակը կը ձեանայ թաթար և չին զնդերէ. թաթար զնդերը ուվիճ դրօշի տակ են, դեղին, ճերմակ, կարմիր և երկնազոյն և ասոնց խառնուրդները. իսկ չինացի զնդերը կանաչ դրօշ մ'ալ աւելի ունին: Զինուորական զգեստն է երկնազոյն վտաւակ մը, անոր վրայէն ալ կարմիր պարեգօտ մը ճերմակ շըրջապատով, և կամ երկնազոյն պարեգօտ մը կարմիր դարձուածքներով. իսկ զլխարկն ներկած նեղկեկ պամպուի տախտակներէ է, կոնածե սուրի հարուածներուն դիմանալու համար: Երբեմն ալ մանտարիններուն նման կը զնեն զլուխնին մետաքսէ, և ծայրը առանց զնդակի: Սազաւարտնին երկաթէ է ձագարի նման, և ծայրէն մետաքսի և կամ բաշերու խուրձ մը կախուած: Հեծելազօրին սովորական զէնքն է ա-



Զինացի զինուոր.

ղեղ և նիզակ, աղեղը ճկուն փայտէ և
եղջիւրաձև, չուանն ալ մետաքսէ և ուժ-
գնապիրկ . ունին նաև սուր և վահան,
վահանը պամպուի փայտէ , որուն կե-
դրոնը խղնջաձև կը վերջանայ :

Զինք թէպէտե Եւրոպացոցմէ առաջ
ճանչցան վառօղը, բայց միայն իրենց
զուարճութեանը գործածեցին զայն ,

ինչպէս հրախաղութեան համար . ին-
չուան ետքի կայսերք ալ իրենք զիրենք
թաթարաց դէմ պաշտպանելու ատեն
Մաքաօբնակող Եւրոպացոցմէ խընդ-
րեցին պէտք եղած պատերազմական
անօթները : իսկ եօթնեսամներորդ դա-
րուն ետքերը , Մողոլաց կայսրը Հ . Վեր-
պիէ յիսուսեան կրօնաւորին առաջնոր-

դութեանը տակ հարիւրի մը չափ հրաբերան գործիներ շինել տուաւ . հիմա թէպէտև թնդանօթներ ալ ունին բայց անոնց գործածութեանը մէջ տգէտ են : Զինաց քաղաքական և զատաստանական օրինաց գիրը շատ գովուած է քանի մը Եւրոպացի քննադաստներէ՝ իրեն շղթայակապկարգաւորութեանը և ոճին պարզութեանը համար , մանաւանդ ետքինին համար , որ ասիական երկասիրութեանց մէջ ամենազժուար դրոնուող յատկութիւնն է . կը բաժնուի վեց մաս , և կը բովանդակէ իր մէջը ինչ որ տէրութեան և ընկերութեան մը վարչութիւնը կ'ուզէ և կը պահանջէ : Առաջնոյն մէջ կը բովանդակուին քաղաքական պաշտամանց նկատմամբ օրէնքներ , երկրորդին մէջ վիճակագրական և արքունի գանձուց , երրորդին մէջ են արարողական օրէնքները , չորրորդին մէջ զինուորականները , հինգերորդին մէջ պատժականները , վեցերորդին մէջ հասարակաց աշխատութեան վերաբերեաները : Պատժական օրինաց մէջէն քանի մը զվասարուները յիշենք միայն , ինչպէս խղղելը և զվասարուները . մատնութեան , հայրասպանութեան , սրբապրզծութեան համար Լինեկ-Զի այսինքն դանդաղ մանր սահմանած է՝ որ հատու սրով կտոր կտոր ընել է զմարմինը : Ասոնցմէ ետքը կու գայ անուրը , որուն գործածութիւնը թէպէտև ուրիշ ասիաբնակ ժողովրդոց մէջ ալ կայ բայց ոչ Զինաց պէս յաճախ , պասոր և պամպուի հարուած . պատիմը դատաւորին ներկայութեամբը կը տրուի , և դատաւորը ունի ազատութիւն թեթևցնելու զայն ըստ հետեւալ Զինաց առակին . « Օրէնքը հաստատելու ատեն խստութիւն կարեոր է , բայց անոր գործադրութեան ատեն զթութիւն » : Յանցանաց մէջ ամենէն սաստիկ պատուհասակոծը մատնութիւնն է , որուն համար ոչ միայն յանցաւորը այլ և իրեն ընտանիքն ալ դանդաղ մանրուան կը դատապարտուին . զինեալ գողին պատիմը մահ է , պարզ գողինը պասոր և պամպու , և ոտքով և ձեռքով զիրար

հարկանողներն ալ ունին իրենց սաստիկ պատիմները . կանայք որոնց անհաւատարմութիւնը հաստատուած չէ , ոչ երբէք կը բանտուին , այլ 'ի պահստի կը դրուին իրենց ծնողաց քով , պատասխանատուութիւնը անոնց վրայ թողլով :

Հայրական հեղինակութիւնը , որ և հիմն է վարչութեան , տէր է իր որդւոյն կենացը և մահուան . եթէ սպաննէ զայն առաջուց մտածելով ալ՝ դարձեալ պատիմը պամպու և տարի մը աքսոր է . այս պատիմներէն ալ ազատ կը մնայ և անմեղ կը համարուի եթէ բողոքելու ըլլայ :

Բայց կան օրինաց գրքին մէջ այնպիսի անորոշ կարգադրութիւններ ալ , որոնք ընդարձակ ասպարէզ մը կը բանան դատաւորացանզթութեանը իրենց հպատակները տանձելու . ասկէ զատկայ ուրիշ երեսոյթ մ'ալ որ կատարեալ բռնաւորութիւն է , այսինքն օրինաց տակ ձգել այն գործքերը որ պատշճութեան հետեւան հետեւանքն են , և ևս առաւել այն գործքերը որ սրտի զգածմանց հետկախմոնք ունին . որով առաքինութեն վրայէն բարոյականութեան դրոշմը վերցուած առաքինական գործը սոսկ երկիւղի հետեւանք մը կ'ըլլայ :

Գերի մը երբ սպաննէ իր տէրը՝ դանդաղ մահուամբ կը պատժուի , իսկ երբ տէրը սպաննէ զգերին՝ վրան և ոչ գաւազան մը կը շարժեն : Դարձեալ գերութիւնը քանի մը օրինազանցութեանց համար սահմանեալ պատիմ է , և եթէ մէկ մ'ալ ըլլայ օրինազանց , իրեն հետնոյն պատժոյն դատապարտեալ է նաև բոլոր իր ընտանիքն . դարձեալ կան յանցանքներ որոնց պատիմը դրամով կրնան զնել , որով այս օրէնքը աւելի հարուստներուն սիրելի է քան թէ աղքատաց : Պարտքերնին չհատուցանողաց պատիմը որոշեալ թուով պամպու է . և երբեմն ալ պարտատէրը իր ընտանեացը հետ պարտապանին բնակարանը կ'իջնայ օթեանելու համար :

Իսկ հիմա որ խօսելու կարգը Զինաց կրօնքին կու գայ , թերես երբեմն

ըսուած բաներու կրկնութիւններ տես-
նան ընթերցողք, բայց կ'իմանան թէ
չեն կրկնութիւնք երբ ուշադրութեամբ
կարդան: Կրօնքնին որ երեք կը բաժ-
նուի, և անոնցմէ աւելի պատուեալը
կոմփուկիոսինն է, նոյնը դարձեալ երեք
կը բաժնուի: Դա—սէ կամ Մեծ զոհա-
գործուրիւնք, Չուկ—սէ կամ Միջին զո-
հագործուրիւնք, Սիաօ—սէ կամ Փոքր
զոհագործուրիւնք: Առաջին բաժան-
ման մէջ կը պաշտեն զերկինս և զեր-
կիր և կը ճանչնան երկնային միտք մը
առաքինութեանց վարձատրիչ: Մի-
ջին զոհագործութեանց երկրպագելիք
և պաշտելիքներն են երկրին և գեմե-
տրական չաստուածները. առաջնոցներ
կոյացուցիչը սեղանի մը վրայ դրուած
անտաշ քար մ'է, որուն առջե միշտ
խունկ կը ծխեն և գրեթէ ամէն փողոցի
անկիւնները կը գտնուի: Արել և լու-
սինն ալ, որոնք ուրիշ անուամբ մեծ լու-
սաւոր, և լուսաւոր գիշերոյ կ'անուանին,
այս բաժանման մէջ են. իսկ գեմետրա-
կան ածները, ոգեաց, իմաստնոց, երկրա-
գործութեր հնարողաց, գործաւորաց և
ուրիշ օգտակար արուեստից աստուած-
ներ են: Կայսրը միայն կրնայ Շանկ-
Դիի, այսինքն Աստուծոյ՝ պատարագ
նուիրել և այն ատեն երկնագոյն կը
հազնի ՚ի նշանակ երկնից. Երբ զեր-
կիրս պաշտէ դեղին, երբ արեգակը՝ կար-
միր, և երբ լուսինը՝ սպիտակ: Հասարա-
կաց պաշտօնեայք ալ քահանայական
պաշտօն կը կատարեն, բայց այն ատեն
մասնաւոր պարտքերու տակ են: Առա-
ջին կարգի զոհագործութեանց համար
պարտըկան են տաճկական մկրտու-
թեամբ իրենք զիրենք պատրաստելու,
զգեստնին փոխելով, ուխտով և եռո-
րեայ ծոմսապահութեամբ. դարձեալ մա-
քուր սենեակ մը առանձնանալ, յան-
ցաւորը չգատել, խնջոյից մէջ չերե-
նալ, երաժշտութիւն չըսել, կանանց-
մէ հրաժարիլ, հիւանդաց չերենալ,
տուգի մէջ մտնել, գինիէն ժուժկա-
լել. վասն զի մեկնիչ մը կ'ըսէ թէ հի-
ւանդութիւնը և մահը կու գան մինչ-
գեռ սեղանը և զուարճութիւնը կը խոս-

վեն զմիտս և զանիկայ անարժան կ'ը-
նեն աստուածոց հետ հաղորդելու: Ող-
ջակիզմամբ եղած զոհերն են խոյ, ոչ-
խար և խոզ. մէկալ տեսակ ընծաները
ընդհանրապէս մետափուղէնով կ'ըլլան:
Զոհերը պէտք է որ ամբողջ և անարատ
ըլլան, նմանապէս զոհագործութեանց
ժամանակներն ալ որոշեալ են, ինչպէս
երկնից համար ձմեռնային արևադար-
ձը, երկրի համար ալ ամառնային ա-
րևադարձը, և այն և այն: Եթէ ան-
պատրաստ և կամ անկատար կերպով
մատուցանեն զոհերը, մանաւանդ քըր-
մապետները, 'ի պատիժ կամ թոշակ-
նին կը կորսնցընեն և կամ պամպուի
հարուած կ'ընդունին: Բայց երբ հե-
թանոս մը յանդգնի երկնից պաշտօն
մատուցանել, պատիժը ութսուն պամ-
պու և խեղդամահ է:

Փոքր զոհագործութեանց մէջ պաշ-
տօն կ'առնուն բժշկաց հայրը, տէրու-
թեան վախճանեալ մարդիկը, հոչակա-
ւոր իմաստունները, առաքինութեանց
համար մարտիրոսները, և այն և այն:
Ասոնց հետ մէկտեղ պաշտօն կ'առնուն
նաև բնութեան երևոյթները, ինչպէս
ամպերը, անձրել և որոտումը իբրև մէյ-
մէկ աստուածութիւններ. ջուրն ալ ու-
նի իր աստուածու պատերազմն ալ, ծովս
ալ իր աստուածուհին. մեծամեծ չո-
րութեանց ատեն իշխանութիւնը հրո-
վարտակաւ ծոմպահել կը ծանուցանէ
ամենուն և ամէնքը մէկտեղ օրերով
տաճարին մէջ ջուրց աստուծոյն կ'ա-
զօթեն անձրեի համար:

Ասկէ ետքը կու գան Ֆոյի վարդա-
պետութիւնը և կամ Պուտուեան ա-
ղանդը, Դաօյի և կամ իմաստափրաց
աղանդը: Առաջինը տարածուած է Հընդ-
կաստանի մէջ, և անկէ մուտ գտած է
՚ի Դիպէդ, ՚ի Սիամ, ՚ի Քոչինչին, Պիր-
մանաց, Թաթարաց և Ճապոնաց մէջ:
Գրեթէ Քրիստոնի թուականէն հազար
տարի առաջ Պուտուա երեցած է ՚ի
Հնդկաստան և Հանացած է Պրահմայի
պաշտօնը ուղղել. և յաջողած է թերա-
կզույն կայսերաց շատերուն հաւատքը
փոխելով: Նախ և առաջ պարզ աս-

տուածաբանական վէճեր ծագեցան
Պուտտայ և Պրահմայ աշակերտացը մէջ,
բայց հետևանքը եղաւ արիւնահեղ պա-
տերազմ, և Քրիստոսի վեցերորդ դա-
րուն Պուտտեանք մեծ կոտորածով հա-
լածուեցան Հնդկաստանէն Պուտտեանց
գանգէսի ափունքներէն վորնառուելէն
հինգ դար առաջ, իրենց աղանդը տի-
րած էր Զինաց մէջ: Պուտտականու-
նութեան աղանդոյն հիմն է հոգեւիռ-
իւուրիւն, և մէջը նշոյլ մ' ալ կը փայլի
երրորդութե վարդապետուե: Ֆոյ նոյն
անձն է երեք զանազան կերպարանաց
տակ, որք են երեք ոսկեզօծ արձաններ.
իմաստուն մը խորհրդոյս հետևեալ մեկ-
նութիւնը տուած է: « Պուտտա և կամ
իմացականուրիւնը առաջ բերաւ ըզ-
ջարմա, զօրէնս. և երկուքը մէկտեղ
ծնան զՄանկա, բազմաց միուրիւնը,
և կամ կապը: Պուտտականութե քրիս-
տոնէութեան հետ ունեցած նմանու-
թիւն մ'ալ աս է, որ Քրիստոսի պատ-
մութեանը նման պատմութիւն մ'ալ ի-
րենք ունին:

« Խորին արեմտեան ժողովուրդները
կ'ըսեն որ Զինաստանէ 97 լի հեռաւորութ
(գրեթէ երեք տարուան ճանապարհ)՝
կը սկսին Սի-Քիանկայ ափունքը: Այս
երկրիս մէջ կար Մա-լի-ա անունով
կոյս մը, և կ'ապրէր Հան հարստութեան
Եռէլ-Զի թագաւորին ատեն: Երկ-
նային թագաւոր մը ելաւ երեցաւ ի-
րեն ըսելով, երկնից Տէրը զքեզ իրեն
մայր ընտրեց: Այս խօսքերէս ետքը
յղացաւ կոյսը և ծնաւ որդի մը: Լցեալ
ուրախութե և յարգանօք պատատեց
զայն և մսուրի մը մէջ հանգչեցուց, երկ-
նային աստուածոց բանակ մը կ'երգէր
և կը զուարձանար դատարկութեան
մէջ: Քառասուն օրէն ետքը իր մայրը
ներկայացուց զայն սուրբ ուսուցչին և
անուանեց Ել-Սու: Հազիւ տասու եր-
կու տարուան կար երրոր մօրը հետ
մէկտեղ տաճարը գնաց աղօթելու հա-
մար, և 'ի դարձին կորսուեցաւ. Մա-
լի-ա յետ երեք օր իր որդին փնտու-
լու, գտաւ տաճարին մէջ, որ պատուոյ
աթոռի մը վրայ նստած՝ ծերունի և ի-

մասսուն վարդապետաց հետ կը խօսէր
երկնից Տեառն գործոցը և վարդապե-
տութեանց վրայ: Երբ զմայրը տեսաւ,
զարմացաւ, զարձաւ իրեն հետ, և իրեւ
պատուադիրորդիրեն հպատակնաց: Աւելորդ է պատմութիւնը ամբողջ դը-
նել, վասն զի և ոչ կէտ մը տարբերու-
թիւն կայ հետևեալ մասին մէջ Քրիս-
տոսի վարուց պատմութենէն. անոր
պէս երկոտասաներորդ աշակերտէմը կը
մատնուի, անգութ ժողովրդենէն փշով
կը պսակուի, կը խաչուի, դառն և լեղի
ըմպելիքը կը խմէ և մեռնելէն ետքը
տիեզերաց մէջ կ'երևան այն ամէն ե-
րեսոյթները՝ որոնք Քրիստոս հոգին ա-
ւանդած ատեն կը հաւատանք թէ ե-
րեցան: Պատմութիւնը կը շարունակէ
և կը համնի առանց Քրիստոսի վարդէն
հեռանալու անոր կրկին անդամ երկինք
վերանալը յետ աշակերտացը տալու իր
պատուէրները: « Տասը օրէն ետքը
Աստուած մը կ'իջնայ իր մայրը ընդու-
նելու համար, և կը հանէ յերկինս: Եօթն
դասերէն վեր կը նստի և կ'ըլլայ
մարդկանց պաշտպան և դշխոյ »:

Տարակոյս չվերցներ որ նոր կտա-
կարանի բառ առ բառ թարգմանու-
թիւն մ'է ասիկայ, և թէ այս գիրքը
ծանօթացած ըլլայ իրենց նեստորակա-
նաց միջոցով, որոնք իրենց գէմ ելած
հալածանքներէն ազատելու համարթա-
թարաց երկիրը ապաւինեցան: Բայց
որ աւելի զարմանալի և գժուարալու-
ծանելի է, Պուտտականութեան արա-
րողութեանց նմանութիւնն է Քրիստո-
նէութեան արարողութեանց հետ: Մա-
մանը, այսինքն ֆոյլի քահանայք, հռով-
մէական կղերին նման տարազ մը ու-
նին, կը գերծեն զլուխնին և վանական
կարգաւորութեան մը կը հնազանդին. պարտաւորեալ են ծոմապահութեան,
կուսութեան և վախճանելոց համար
աղօթելու. Նշխարաց յարգութիւն կ'ը-
նեն, ունին օրհնեալ ջուր, և վարդարան
իրենց աղօթքը համրելու համար: Պուտ-
տեան աղանդը շատ փոփոխութիւն կը-
րած է Զինաստան, մանաւանդ քահա-
նայից ինքնահնար և նախապաշարեալ



Պոնից .

սովորութեամբքը : կան նաև կանանց ընկերութիւններ ալ նի-Քու անուամբ և ունին կաթուղիկէ կրօնաւորաց նման կանոններ : իսկ քահանայք ունին քահանայապետ մ'ալ , լամա անուամբ , որ կը նատի Դիպէդ . ունին բազմայարկ տաճարներ , ինչպէս Նանքինի մօտերը եղածը՝ որ ինը յարկով է : Հնդկաց ֆաքլիներուն նման Պուտտայ քահանայք ալ բարեպաշտներէն յարգութիւն ընդունելու համար իրենց ճգնութիւն և

տանջանկը կը հնարեն : ինչպէս Պոնից մը (վասն զի այս է Պուտտայ քահանայից սեպհական անունը) ինքզինքը սայրասուր բևեռներով լցուած տակարի մէջ կը ձգէ , բայց յետոյ կրածներուն փոխարէն ամէն մէկ գամը թանկագին կը ծախէ . ուրիշ մը ինը տարի աշուըները պատի մը վրայ դարձուցած տեղէն չշարժեր : Արդիւնք և յանցանք քննեալք անունով գիրք մը ունին , որուն վրայ իւրաքանչիւր ոք իր խիզճը

պարտըկան է քննելու . ունին դարձեալ տախտակներ յանցանաց և արդեանց համար առանձին . եթէ ոմն սպաննէ անձ մը , յանցանաց տախտակին վրայ հարիւր կէտ պիտի զնէ . ընդհակառակն բարեգործուի մ'ընէ միւս տախտակին վրայ մէկ կէտ : Անձի մը կեանքը ազատելը հաւասարազօր է ուրիշի մը կեանքը վերցընելուն . ճամբայ մը նորոգել , կամուրջ մը շինել , ջրհոր բանալ , ասոնց ամէնքն ալ տասնական կէտի արժէք ունին . հիւանդութիւն մը առողջացնել երեսուն կէտի , փոս մը փորելու համար բաւական երկիր տալ , նոյնչափ , զիւտերու համար ալ աւելի կէտ , անիրաւ տեղ զուրիշ մը թշնամանել իրեք կէտ , գերեզման մը աւերել յիտուն , մեռեալ մը քարշել գերեզմանէն՝ հարիւր , զըրկել մէկը իր հօրենական ժառանգութենէն երկու հարիւր : Պոնցերուն ըրած աղօթքները բալի լեզուով է , որ սանսքրիդի տեսակ մ'է , և կը համարին որ այս լեզուին ծագումը երկնային ըլլայ , և նոյն բառերը հարիւրներով և հազարներով կը կրկնեն առանց ընդհատելու : Պոնցի մը կը հարցընեն , թէ ինչ օգուտ կը յուսաս այսչափ անդամ բառերուն կրկնութենէն որոնց նշանակութիւնն անգամ չես գիտեր . իրաւ է որ չեմ հասկընար , կը պատասխանէ Պոնցը , բայց խորին և խորհըրդաւոր իմաստ մը կը բովանդակէ , իսկ սրբազն բառից կրկնութենէն առաջեկած օգուտը ամբաւ և անթուելի է :

Պուտտեանք ունին նաև արքայութիւնալ , բայց կը վարդապետեն որ յաւերժահարսանց հետ ընտրեալք ամենին հաղորդութիւն պիտի չունենան . վասն զի նախ և առաջ այն երկնային բնակարանը մտնող կանանց սեռը պիտի փոխուի :

Սրբոցներգիւնազանդ մարմինը պարզ և անուշահոտ է . զէմքերնին կանոնաւոր , սրտերնին լի իմաստութեամբ և զեղուն սիրով . չեն հագնիր բայց չեն ալ մնիր . կը հագնին բայց տաքութիւնն ալ չեն զգար . չեն ուտեր , չեն ալ անօթենար , ուտելով ալ չեն յագենար . ոչ

ցաւոց ենթակայ են և ոչ ալ մարդկային հիւանդութեանց . չեն ծերանար , և լուտասի , և աղամանդի ծառերու վրայ մտածելով կը զուարձանան , որոնց տերեները մեղմաբար կը շարժին նման մետաքսէ ոսկեման և մեծ կտորի մը աշեծն ծածանմանցը . երբ աչուլնին բարձրացընեն , կը տեսնեն որ հաստատութիւնը դօ-լո ծաղկով լեցուած է , որոնք հրաշալի խառնուրդով վար կը թափին . իսկ տեղւոյս բնակչաց տարիքը անչափ է : Եթանանք նաև զժոխոց նկարագիրը : Նախ և առաջ Շի-Մինկ-Վանկ (տասնթագաւորք խաւարին) ատենին առջև մեղաւորաց վրայ դատաստան կ'ըլլայ . այն կերպով որով որ Զինաստան կ'ըլլայ , բայց պատիճները չեն նման : Մեղաւորք կը դատապարտուին սղոցով երկու բաժնուելու , պղնձէ հրավառ մոյթէ մը կախուելու և սանդի մէջ ճըզմուելու . ստասացից ալ լեզուն կը կըտրեն , զնենգաւորները և զգողերն ալ դանակներով ցցուած բլուրի մը վրայ կը գահավիժեն :

Երբ դատաստանները կը կտրուին , առաջին կարգի մարդիկ , որոնք որ միշտ առաքինակրօն եղած են , կը բարձրանան երանելեաց բնակարանը . միջին դասու մարդիկը կը դառնան դարձեալ աշխարհք և ուրիշ մարմիններ կը զգենուն հարատութեանց և փառաց մէջ զուարձանալու համար . իսկ մեղաւորք կամ կ'իջնան գժոխք , և կամ կը ստանան այն կենդաննեաց մարմինը , որոնց բարուց նմանութիւնը բերեր էին իրենց վրայ կենդանութեան ատենին :

Ֆոյի աղանդը մերթ պաշտպանութիւն գտած և մերթ հալածեալ վարչութենէն , հիմակ ալ աւելի ետքի վիճակին մէջ կը գտնուի . իրեն հետևողաց կառուցած շէնքերէն շատերը հիմնայատակ կործանուած են , բայց Պոնցերը գեռ ունին իրենց վակիքերը ուրմեծ յաճախութիւն կայ բարեպաշտից : 1833ին կուցլափ անունով Քանդոնի անգղիացի վաճառականութեան պաշտօնեաց մը Չուզան կղղին այցելութեան կ'երթաց և վրան այսպէս կը պատմէ .

12 մղոն քառակուսի տարածութիւն ունեցող կղզին կը բովանդակէ Հ հազար քահանայ, իւրաքանչիւրը կարգեալ՝ ի ծառայութիւն հոյակապ տաճարներու, և ամէն տարի հոն ուստի գնացողներն անթիւ են: Պուտտեան տաճարի մը մէջ Նաբոլէոնի մարմարիոնէ կիսարձան մը կայ և առջեր խնկարան . բայց ո գիտէ, արդեօք գիտութեամբ թէ անգիտութեամբ Նաբոլէոնի կիսարձանն ալ ֆոյի աստուածոց կարգը կ'անցնի »:

Պուտտայ կրօնքէն ետքը կու գայ Դաօյի կրօնքը կամ աղանդը, որուն հիմնադիրն է Լաօ-Շ էռ կամ Լաօ-Քիուն իմաստասէրը: Ժամանակակից է Քունկ-Շ էռի (կոմիուկիոսի) և գեղացւոյ մը որդի: Երբ չափաւոր տարիք մը կ'ունենայ, Չու թագաւորին զիւանապանը կ'ըլլայ, և պաշտամանը միջոցով ինքզինքը կրօնական և իմաստասիրական յուղովութեանց կու տայ . այս ալ իրեն գըրուածներէն գուշակելով գիտենք: Զինաստանի արևմտակողմը երկայն ճանապարհորդութիւններ կ'ընէ, և ՚ի գարձին երբ զհայրենիքը քաղաքական պատերազմաց մատնեալ կը տեսնէ, կ'առանձնանայ և այն կ'ըլլայ իր ետքի կեանքը: Պատմութիւնը աւելին կը լուէ, սակայն ինչուան հիմայ պատմածնիս վաւերէ: Բայց եթէ ուղենանք առասպելաց ըսածներն ալ լսել, գեռ. կան գիտելիքներ: Իր մայրը ասուալի մը ազդեցութենէ կը յղանայ, և երբ իր տէրը զինքը կ'արձէկէ, կը թափառի ինչպէս երեմն Աղար դաշտին մէջ, և սալորենիի մը տակ ճերմակ մազերով և յօնքերով տղայ մը կը ծնանի, այսինքն զլաօ-Շ էռի: Իր վարդապետութիւնը բովանդակուած է Դաօ-Դէ-Քինկ ըսուած զըրքին մէջ, որ ըսել է Գիրք գերագոյն բանին և Առաքինուրեւան: Իրեն զրութիւնը քանի մը խօսքով այս է . Դաօն և կամ գերազոյն բանը երկու կերպ կամ եղանակ լինելութե ունի, հոգեկան և կամ աննիշրական, մարմնական և կամ նիշրական . մարդս առաջ եկած է առաջինէն, և ճիգն պիտի թափէ անոր ծոցը վերստին դառնալու. և այն ա-

տեն զգայական թագաւորութենէն աղատած և մեռուցած անկէ ծնած կիրքերը՝ աշխարհիս զբօսանաց անզգայ պիտի ըլլայ, հոգեկան աստուածային բնութեան բովանդակ կարողութեանց վրայ խոկալու համար . և այսպէսով պիտի նոյնանայ առաջնոյն հետ ուստի առժամանակեայ բաժնուած էր: Յայտնի կը տեսնուի որ Լաօ-Շ էռի վարդապետութիւնը մեծ մերձաւորութիւն ունի քրիստոնէութեան հետ . վասն զի իրեն բանն գերազոյն ըսածը՝ է Աստուած, որուն քով օր մը պիտի գառնան մարդիկ իրեւ սկիզբն հասարակաց ուսկից առաջ եկած են: Լաօ-Շ էռու, բոլորովին խոհուն հոգի մը, կենդանութեան ատեն բանիւք և օրինակով կը քարոզէ անդորրութեան սէր և փախուստ՝ ՚ի փառաւորութենէ և ՚ի համբաւոյ՝ հայեցողական կենաց պարապելու համար: Այս սկզբանց հետեանքն այն կ'ըլլայ որ շատերը զեղծանելով՝ աստեղագիտութեան և բնալուծութենէ կը զբաղին, պատճառաւ երկնային մարմնոց էութեանը մէջ թափանցելու և բընութեան գաղտնիքները յայտնելու, և այսպէսով իրեւ մոգ կը հոչակեն իրենք զիրենք իրենց հետեղաց: Իրենց աղանդոյն կը զօղեն նաև զտգէտները զորոնք խարելլը ամենազիւրին է, յետոյ կը սկսին կայսերաց պալատները մտնալ ու ելլալ: Շատ կայսերը համոզուեցան որ Դաօ կամ Դաօ-Աէ (որդի անմահութեան) անմահութիւն բաշխող ըմպելիք մը պիտի ունենայ . իրեն քահանաները Դանկ հարստութեան ատեն հոչակաւոր վարդապետք սկսան կոչուիլ և իրենց վարժապետին համար տաճար մը կառուցին. սակայն իրենց առաջի համբաւը շատ նուազած է հիմա ժողովրդեան ու մեծամեծաց մէջ, և չունին ազդեցութիւն վարչութեան վրայ . բայց որովհետև գեռ ապագան կը լուծեն և հիւանդութիւններէ կ'առողջացնեն, ժողովրդեան հաւատքը իրենց վրայէն պակսած չէ: